№ 191 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3 1903 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3 № 191

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կաշկանդված ուժեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տօլստոյի եօթանասուն և հինգամեակը. Նամակ Գանձակից. Նամակ Մեծ-Ղարաքիլիսայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Ինչ է կատարվում Մակեդոնիայում. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դէպի Արարատ։

## ԿԱՇԿԱՆԴՎԱԾ ՈՒԺԵՐ

Մենք առիթներ շատ ենք ունեցել ցոյց տալու, որ մենք ուժեր շատ ունենք, բայց այդ ուժերը կապված—կաշկանդված են և չեն ծառայում մեր բարօրութեանը։ Եթէ մեր երկիրը ասպարէզ հանէր իր բոլոր ուժերը, նա ընդունակ կը լինէր թէ ներկայ սերնդին տալ անբաւ հարստութիւններ և թէ ապագայ սերունդների համար բանալ բարգաւաճման ընդարձակ հեռանկարներ։

Թէ մեր հովիտները և տափարակները իրանց բերրի հողերով, թէ մեր լեռները ալպիական տնտեսութեան իրանց յարմարութիւններով, թէ մեր բազմատեսակ հանքերը, թէ մեր լեռնային ջրերը իրանց հոսանքներով—բոլորը խոշոր և հաստատուն պատուանդաններ են արդիւնագործութեան լայնածաւալ զարգացման և տնտեսութեան բարգաւաճման։

Ուժերը կան, բայց նրանք կաշկանդված են։ Նրանք սպասում են ուղեղների և ձեռքերի գործունէութեան, որպէս զի երևան գան իրանց բնորոշ յատկութիւններով։

Մի այնպիսի օգտաւէտ և հրապուրիչ ֆիզիքական զօրութիւն, ինչպիսին է էլէքտրականութիւնը, որը տալիս է գեղեցիկ լոյս և ընդունակ է առաջ բերել մեքենայական խոշոր ույժ, շնորհիւ գիտութեան և տեխնիկայի առաջադիմութեան, կարող է այժմ գործադրվել մեր երկրի այնպիսի տեղերում, որոնք ճանաչված էին մինչև այժմ խուլ, անմատչելի, կիսավայրենի տեղեր։ Ամեն մի լեռնաձոր, որտեղ գոյութիւն ունի գետակ, ջրի ուժեղ թափով կարող է արդիւնաբերել մեծ քանակութեամբ էլէքտրականութիւն և հիմք ծառայել զանազան արդիւնաբերական գործառնութիւնների համար, եթէ տնտեսական միւս պայմանները արգելառիթ չեն հանդիսանում։

Մենք պէտք է լուրջ կերպով զբաղվենք մեր երկրի բնական ուժերի շահագործութեան խնդիրներով, լաւ հասկանալով, որ դարեր շարունակ նրանք սպասում են կուլտուրական գործողների, որպէս զի առաջ գան իրանց ամբողջ զօրութեամբ և տան մեր երկրին այն բարգաւաճումը, որին նա արժանի է և ընդունակ և որը անհրաժեշտ է բանալու նրա ազգաբնակութեան համար արդիւնաբերական աղբիւրներ։

Մենք կը խօսենք այն ճիւղերի մասին, որոնք արդէն սպասել են զարգացման համար նախնական զարկը և այժմ կարօտ են աջակցութեան կուլտուրական գործողների կողմից։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՏՕԼՍՏՕՅԻ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ԱՄԵԱԿԸ

Օգոստոսի 28-ին ռուսաց գրականութեան համար մեծ տօն էր. այդ օրը ռուսաց մեծ գրող Լեվ Տօլստոյի ծննդեան եօթանասուն և հինգ ամեայ տարեդարձն էր։ Պատկառելի ծերունին ոչ միայն ռուսաց գրականութեան, այլ և համաշխարհային գրականութեան մէջ մի խոշոր մեծութիւն է, որի առջև խոնարհվում են թէ արևելքը և թէ արևմուտքը։

Ռուսաց մամուլը հրճուանքով ողջունեց մեծ ծերունուն. բոլոր լրագիրները լիքն են Տօլստոյին նուիրված յօդուածներով։ Այստեղ մենք բերում ենք այն տողերը, որ նուիրել է Տօլստոյի «Русскія Вѣдомост» լրագիրը։

«Այսօր լրանում եօթանասուն և հինգ տարին Լ. Ն. Տօլստոյի ծննդեան օրից։ Ողջունում ենք ամբողջ ինտելիգէնտ Ռուսաստանի և ամբողջ կուլտուրական աշխարհի հետ միասին մեր մեծ գրողին և սրտանց ցանկանում ենք նրան առողջութիւն և ույժ նրա ստեղծագործական գործունէութիւնը երկար տարիներ շարունակելու համար։ Խօսել այժմ նրա գեղարուեստական մեծ ձիրքի մասին, այն ահագին նշանակութեան մասին, որ նրա գործունէութիւնը ունէր և ունի ռուսաց գրականութեան, նոյնպէս և ամբողջ աշխարհի գրականութեան համար, խօսել այն աշխատանքի մասին, որը առաջ է բերում նրա իւրաքանչիւր գրուածքը, նշանակում է կրկնել այն, ինչ որ յայտնի է իւրաքանչիւրին։ Եթէ ներկայումս կայ մի գրող, որի գեղարուեստական ույժը ոչ ոքից կասկածի չէ ենթարկվում, եթէ կայ մի ձիրք, որի առաջ համահաւասար խոնարհվում են թէ բարեկամները և թէ թշնամիները, մի այդպիսի գրող Տօլստոյն է, այդպիսի շնորք ներկայացնում է նրա զօրեղ բելլետրիստական տաղանդը։ Ժամանակակից գրողներից ոչ մէկին չէ աջողվում միացնել իր բելլետրիստական գրուածքների շուրջը այնպիսի միաձայն հաւանութիւն, որպիսին առաջացնում է Տօլստոյն։ Սովորաբար ամենից հիացմունքները միանում են ուրիշների դատապարտութեան հետ։ Միայն Տօլստոյը, որպէս գեղարուեստագէտ, ներկայանում է բոլորի համար մի անվիճելի մեծ ույժ, միայն նրա գրուածքներին աջողվում է յարուցանել անտարբերութիւնից հեռու զգացմունքներ։ Եւ չը նայելով այն բանին, որ նրա գրականական գործունէութիւնը արդէն կէս դար է բոլորել, ընթերցողների այդ զգացմունքները չեն փոխվել, և եթէ մենք դեռ հնարաւոր համարէինք նրա հռչակի աճումը, մենք կասէինք, որ Տօլստոյի փառքն աճում է տարէցտարի։ «Երկարակեցութիւնը և փառքը թշնամիներ են»—գրում էր Նէկրասով։ Այդ առացուածքը արդարացի է նրանց համար, ով բաւականանում է երիտասարդութեան ժամանակ ձեռք բերած դիտողութիւնների շրջանակով, ով ինքն չէ աճում և չէ փոփոխվում, ում համար երկար կեանքը նոր եզրակացութիւնների և ապագայի նոր հեռանկարների աղբիւր չէ։ Գրողը «սպառվում է» այն ժամանակ, երբ կեանքը դադարում է դաս լինելուց նրա համար, երբ նա վերջ է դնում սովորելուն և չէ կարող ոչինչ նոր եզրակացութիւններ հանել այն բոլորից, ինչ որ նա դիտում է։ Միայն մշտական կենդանութիւնը, դիտութեան անխոնջ ծարաւը ստեղծում են յաւիտենական կեանք գրողի գրուածքների համար և մշտական փառք նրա համար։ Այդ անյագ ծարաւով պապակվում էր Տօլստոյ իր ամբողջ կեանքի ընթացքում։ Նա երբէք չէր բաւականանում ուրիշների դիտողութիւններով և եզրակացութիւններով, այն պատրաստի ճշմարտութիւններով, որոնք ընդունվում են հաւատով մեծամասնութիւնից և երբէք չեն ստուգվում։ Գեղարուեստական մեծ տաղանդի հետ միասին նա միացրեց ընդունակութիւն կրիտիքաբար վերաբերվել այն բոլորին, ինչ որ տեսնում էր, կարդում կամ իւրացնում էր ուրիշներից։ Այդ ընդունակութիւնը մեծ չափով ցոյց տուեց նա իր բելետրիստական գրուածքներում (և դրանով է բացատրվում թէ նրանց ինքնուրոյնութիւնը և թէ նշանաւորութիւնը), իր մանկավարժական հայեացքների մէջ (և դրա շնորհիւ նա նովատոր էր մանկավարժութեան մէջ), իր հասարակական և փիլիսոփայական հայացքներում (և դա է պատճառը այն բազմաղան վէճերի, կրիտիքական յօդուածների, համակրութեան, զայրոյթի և թշնամութեան, որ առաջ են բերում նրա բարոյագիտական ուսմունքները)։ Գեղարուեստագէտի հետ միասին քննադատը երբէք չէր մեռնում նրա մէջ, և մտքի այդ անընդհատ աշխատանքը մտքի նոյնպիսի աշխատանք էր զարթեցնում ընթերցողների մէջ։ Մարդկային յարաբերութիւնները, բարոյականութեան և անձնական կատարելագործութեան հարցերը զբաղեցնում էին նրան գրականական ճանապարհի հէնց առաջին քայլերից, նրանք զբաղեցնում են նրան և այժմ։ Իր ամբողջ կեանքի ընթացքում նա սովորում էր, և այդ պատճառով նրա սեփական ուսմունքները կենդանութեան այն բնաւորութիւնն էին ընդունում, որը ակամայ գրաւում է, որքան էլ հեռու լինեն ընթերցողների հայեացքները այն հայեացքներից, որ քարոզում էր Տօլստոյ։ Այդ պատճառով նրա հայեացքներն էլ անփոփոխ չէին մնում. անդադար դիտելով, անդադար բացատրելով և հրատապ զգացմունքով վերաբերվելով կեանքին, նա լրացնում էր, զարգացնում էր և փոփոխում էր իր կարծիքները և նրանց համապատասխան փոխում էր և ուսմունքները։ Մտքի այդ անդադար աշխատանքով նա պահպանեց իր երիտասարդութիւնը, և այժմ, չը նայելով իր պատկառելի հասակին, նա մնում է բարոյագիտութեան հարցերին նոյնպիսի կրքով վերաբերվող երիտասարդ գրող, որպիսին ասպարէզ եկաւ նա առաջին անգամ Լ. Ն. Տ. ինիցիալների ստորագրութեամբ։ Եւ նրա այդ անթառամ երիտասարդութեամբն է բացատրվում այն մշտական հետաքրքրութիւնը, որով ընթերցողները վերաբերվում են այն բոլորին, ինչ որ նա գրում է, դրանով է բացատրվում մտքի այն աշխատանքը, որ միշտ առաջացնում են նրա գրուածքները, որպէս էլ նայէին նրանց վրա,—դատապարտութեամբ թէ համակրութեամբ։ Եւ եօթանասուն և հինգամեակի այս օրը մեզ մնում է միայն մաղթել, որ մեծ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ

(Շարունակութիւն)

Գնացքը շարժվեց նորից։ Անհամար օձապտոյտներ կատարելով, Դէբէդի երբեմն աջ, երբեմն ձախ ափը թռչելով, երբեմն սլանալով փոքրիկ տուննէլների միջից, երբեմն հանդարտ, կրէայի նման, սողալով դէպի վեր՝ գնացքը մտաւ Շահալուի ձորը։

Ես զարթեցրի Սարգսեանին. երկուսով մենք սկսեցինք դիտել այդ իսկ որ հրաշագեղ ձորը։ Կանուխ առաւօտ էր. արևը նոր էր բարձրացել հանդիպակաց անտառապատ լեռների գագաթից և իր ճառագայթները ցցել վագոնի պատուհանից ներս։ Մեղմ զեփիւռ էր փչում ու տատանում անհամար հաստաբուն ու սաղարթախիտ լորենիների, հաճարենիների ու բոխիքենիների տերևները։ Բուսական ճոխ թագաւորութեան կենտրոնումն էինք։ Բնութիւնը, այդ խորհրդաւոր, միշտ անծանօթ էակը, ոչինչ չէ խնայել գեղեցկացնելու Գուգարաց աշխարհի այս բեկորը, ուր որ և է անտառապատ բլրի զովասուն կիսախաւարում, անշուշտ, հաստատել է նա իր անտեսանելի գահը և ուր բազմում է յաճախ՝ փախչելով անապատների տօթից ու խորշակից։ Այո, եթէ կայ բնութեան թագուհի և եթէ աշխարհի վրա ունի մի տեղ նա կայան՝ այդ կայանը լինելու է Շահալուի ձորը։ Գեղեցիկ է նա մանաւանդ այն ժամանակ, երբ արևն իր ոսկի ճաճանչներով նոր սկսում է ողողել ձորի զանգուր կողերը և վառել կանաչազարդ բլուրների կատարները։ Նայում ես և չես կշտանում դիտելուց։ Ահա հեռու, հեռու լեռնալանջից, խիտ անտառի ծոցից, երևաց մի բարակ ծուխ և, իբրև առաւօտեան խնկարկութիւն, սկսեց կամաց կամաց բարձրանալ դէպի երկինք. ահա մի այլ տեղ, ձորի խոր յատակում, ուր ծառերից ազատ՝ գետակի ափին փռված է մի փոքրիկ ծիղաւէտ դաշտ, արածում է սպիտակ, մաքուր գառների հօտը. չարաճճի գառնարածը երգում է մի ինչ որ եղանակ. նրա ձայնը հազիւ է հասնում մեզ. ինձ թւում է, թէ ես լսում եմ հայերէն բառեր... Ահա ձորի յատակի լայն ճանապարհով խումբ-խումբ անցնում են զարդարված գիւղացի կանայք ու աղջիկներ—ուխտաւորներ դէպի մերձակայ վանքերը։ Անտառ, կանաչաւէտ դաշտ, հօտ, գիւղացի զարդարուն կանայք ու աղջիկներ կան շատ տեղ, բայց այստեղ ամեն ինչ այնքան գեղեցիկ է, այնքան գուրեկան, այնքան հաճելի, որ ես աչքս ակամայ հեռացրի նրանցից միայն այն ժամանակ, երբ հասանք Շահալու կայարանը։

Ես վայր իջայ գնացքից և մտայ կայարանը։ Մի քանի ռուս գաղթականներ, տղամարդիկ ու կանայք, երեխաները գրկին, գնացքից դուրս թափված բազմութիւնից ողորմութիւն էին խնդրում։ Մէկը նրանցից դիմեց ինձ։

—Переселенцы? հարցրի ես։

—Да, батюшка, переселенцы.

—Куда держите путь?

—Не знаемъ куда, но вотъ-бы намъ эти мѣста; какъ было-бы хорошо! լեզուն դուրս հանելով ու նորից ախորժակով ներս քաշելով, ասում է ռուս գաղթականը ու ցոյց տալիս Շահալուի հրաշալի ձորը։

Ես մի քանի կոպէկ տուի գաղթականին և վազեցի յետ՝ դէպի մեր վագոնը։

Մօտենալով կրկին պատուհանին և նորից մի անձկալից հայեացք գցելով ձորի գեղանկար տեսարանին՝ ես ուժգնութեամբ ընկայ նստարանի վրա և ծածկեցի գլուխս վերմակով...

IV

Ընկերները, հանգիստ ու երկարատև քնից յետոյ, զարթեցին վերջապէս և ես հնարաւորութիւն ունեցայ ծանօթանալու նրանց հետ։ Երկուսին արդէն ճանաչում է ընթերցողը. միացածների մէջ ամենից օրիգինալ անձնաւորութիւնը ինձ՝ արշաւախմբի կազմակերպող Ա. Ենանգուլեանն էր։ Առանց իմ վկայութեան էլ՝ նա յայտնի է Թիֆլիսին իր հասարակական եռանդուն գործունէութեամբ քաղաքային ինքնավարութեան և Գիւղատնտեսական ընկերութեան մէջ։ Սակայն նա այնքան էլ յայտնի չէ իր գործունէութեան մի այլ համակրելի կողմով, որ շատ սակաւ է պատահում մանաւանդ մեր, հայերիս մէջ։ Ընդհանրապէս մենք, հայերս, դանդաղաշարժ մարդիկ ենք. մենք չենք սիրում, եւրօպացիների նման, ճանապարհորդել, տեսնել, թէ ինչ է կատարվում ուրիշ աշխարհներում։ Մենք չենք ճանաչում նոյն իսկ մեր երկիրը,—մեր մի քանի քաղաքները, նշանաւոր լեռները, դաշտերը։ Անթիւ են մեր մէջ այնպիսիները, որոնք ծնվում ու մեռնում են մի որ և է գաւառական քաղաքի սահմանում, առանց գաղափար ունենալու մի այլ քաղաքի մասին, որ մի քանի տասնեակ վերստ միայն հեռու է առաջինից։ Չը նայելով իր արդէն պատկառելի 50—55 տարեկան հասակին, Ա. Ենանգուլեան իւրաքանչիւր տարի կազմակերպում է ճանապարհորդական խմբեր՝ շրջելու մեր երկրի նշանաւոր տեղերը և ծանօթանալու նրանց հետ։ Նրա կազմակերպած խմբերը, հնար եղած տեղում, շրջում են անշուշտ ոտքով և այդ եղանակով նրանք արդէն մի քանի ուղևորութիւններ են կատարել դէպի Աթէնի ձորը, դէպի Սվանեթիա, դէպի կովկասեան լեռները, դէպի Անի, դէպի Արարատ։ Անցեալ 1902 թուականի ամառը, օգոստոսի սկզբներին, նրա խումբը բարձրացել է Արարատի գլուխը և կանգնեցրել այնտեղ մի օդերևութաբանական դիտարան, որին կրկին անգամ այցելելը և դիտողութիւններ վերցնելը կազմում է ներկայ տարգրողը դեռ երկար պահպանէ իր երիտասարդութիւնը, որ բոլորը, ինչ վերաբերում է մարդու երջանկութեանը, առաջվայ պէս յարուցանէ նրա կրակոտ վերաբերմունքը, որ ռուս և օտար ընթերցողները դեռ երկար հնարաւորութիւն ունենան գտնել նրա գրուածքներում կեանքի, մարդկային յարաբերութիւնների, բարոյագիտութեան վրա մտածողութեան այն տուրմուլը, որ նրանք գտնում էին մինչև այժմ։

## ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌԻՑ

Բանանց գիւղ, օգոստոսի 30-ին

Տարվայ բերքը այս տարի Գանձակի գաւառում ընդհանրապէս միջակ կարելի է համարել. տեղ-տեղ նա միջակից բարձր է, տեղ-տեղ շատ ցածր։ Վերջին տեղերում բերքի ծայրայեղ պակասութիւնը առաջ է եկել նրանից, որ կարկուտն ամբողջովին կամ մեծ մասամբ ոչնչացրել է արտերն ու այգիները. այդպիսի տեղեր բարեբախտաբար քիչ են։ Եթէ գարնան առաջին կիսում նկատվող տարվայ բարեյաջող ընթացքը շարունակվէր մինչև ամառվայ վերջը, այս տարին իր բերքով կը դասվէր անշուշտ հազուագիւտ գերազանց տարիների շարքում, ու մեր գաւառի գիւղական ժողովուրդը իր անմխիթար տնտեսական դրութիւնը զգալի կերպով կը բարւոքէր, կը կազդուրվէր թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս, թէ կուշտ կուտէր և թէ մի բան յետ կը գցէր սև օրվայ համար, կը թեթևացնէր իր պարտքերի անտանելի բեռը, կազատվէր հարկերի ապառիկներից ու քիչ չափով գոնէ, այս կամ այն տեղ, կը ձեռնարկէր հասարակօգուտ գործեր, կաւարտէր գոնէ ձեռնարկած ճանապարհների շինութիւնը։

Գարնան երկրորդ կէսը խիստ անձրևային էր, ամառվայ մեծ մասը ևս։ Հնձի ու կալսելու համար բարեխառն եղանակը սկսվեց միմիայն յուլիսի վերջերից, որը բարեբախտաբար մինչև օրս շարունակվում է ու հնարաւորութիւն է տալիս գաւառի լեռնային մասի գիւղացիներին կալսել հնձածը, տուն գցել ցորենը, գարին ու յարդը։ Գարնանը առատ ու յաճախակի էր նաև կարկուտը, որը աւելի վնասեց, քան անձրևները ու որի մասին իր ժամանակին գրվել է մանրամասն։ Գարնան վերջերի ու ամառվայ անձրևները աւելի վնաս հասցրին գաւառի դաշտային մասի ժողովրդին, խանգարելով հնձի կանոնաւոր ընթացքը ու փտեցնելով հնձածը. դաշտային մասի բերքի $1/4$ մասը կորաւ անձրևների շնորհով։

Անձրևներից անչափ վնասվեցին նաև խաղողի այգիները. վերջիններից նրանց բերքը, որոնք ենթարկվեցին թժշկման, համարեա ամբողջովին փչացաւ «թոզ» կոչվող հիւանդութիւնից. այդպիսի այգիներից այս տարի բերք համարեա չէ սպասվում բնաւ. ամենից շատ վնասվել են լեռնային հովիտներում գտնվող այգիները։

Երկարատև յորդ առատ անձրևները մի ուրիշ մեծ վնաս էլ տուին գիւղական ժողովրդին. մայիսի վերջերից եղջիւրաւոր անասունները վարակվեցին «դաբաղ» (ящуръ) կոչվող հիւանդութեամբ, որը արտայայտվում է կճղակների ու լեզուի վրա երևացող ուռուցքներով ու վէրքերով. անասունը զրկվում է ման գալու ու արածելու կարողութիւնից։ «Դաբաղի» հետևանքը եղաւ կաթի, պանրի, իւղի ու թանի պակասութիւնը ու թանգութիւնը. բացի այդ՝ ամառվայ ընթացքում գութանները խափան մնացին մօտ ամիս ու կէս (յունիսի սկզբներից մինչև յուլիսի կէսը) ու այդպիսով գիւղացիները հնարաւորութիւն չունեցան իրանց հողերը վարել, «ցել» տալ ամառվայ առաջին կիսում, ինչպէս ընդունված է այդ։ Շատ գիւղեր համարեա առանց «ցելի» մնացին կամ շատ աննշան տարածութիւն «ցել» տուին ու պիտի բաւականանան աշնանավարով, որը ամենաբարեյաջող դէպքում կէս արդիւնք է տալիս համեմատած «ցելի» հետ։ «Ցել» տալ նշանակում է վարել հողը գարնան վերջերում կամ ամառվայ սկզբներում ու թողնել նշան մինչև աշնան երկրորդ կէսը առանց սերմելու. վարած, քանդած հողը, ենթարկվելով արևի տակ 2—3 ամիս շարունակ ու այդպիսով քիմիական որոշ պրոցեսների ենթարկվելով, անհամեմատ աւելի ծննդարար է դառնում սերմի համար, հետևաբար և աւելի պտղաբեր, քան այն հողը, որը վարելուն պէս ցանքում են, որի մէջ սերմ են գցում իսկոյն և եթ։ Մի և նոյն պայմանների մէջ «ցելը» երկու անգամ աւել է արդիւնք տալի աշնանավարից։ Մեր լեռնավայրերի հողերը «ցելի» շնորհով կամ, ըստ գիւղացիների, «ցել ուտելով» են միայն արդիւնք տալիս։ Անասունների այս տարվայ «դաբաղն» այդ պատճառով մեծ հարուած հասցրեց գիւղացիներին։

Եղանակներն այժմ լաւ են, շատ բարեյաջող լեռնավայրերի բարձր կէտերի հնձի, որը դեռ շարունակվում է ու կը վերջանայ սեպտեմբերի մօտ 15-ին, ու հնձածը կալսելու համար։ Եթէ եղանակներն այսպէս շարունակվեն, ցուրտ ու անձրևներ չը լինեն, մեր երկրագործները աշնանավարի տարածութիւնը գոնէ կարող են ընդարձակել։

Չը նայած այդպիսով տարվայ ոչ այնքան բարեյաջող ու նպաստաւոր ընթացքին, գիւղացու դաժան աշխատանքի արդիւնքն այս տարի այնուամենայնիւ բաւարար կարելի է համարել. գիւղական ժողովուրդը մինչև հետևեալ տարվայ հունձը այս տարվայ ստացուածքով կարող է ծայրը ծայրին հասցնել ու չը քանդվել, քայքայվել հաց ու «տպուռ» գնելով. խոտի ու յարդի պաշարն էլ բաւարար է։

Մեր գաւառի գիւղական հասարակութիւնները նախանցեալ տարվանից ձեռնամուխ են եղել մի շատ համակրելի գործի, որի մասին քանիցս անգամ գրվել է արդէն «Մշակում». դա ճանապարհների շինութեան գործն է։ Հարկաւոր է օգտվել տարվայ բաւարար արդիւնքից ու աշնան աշխատանքները վերջացնելուն պէս նախկին եռանդով շարունակել այդ օգտաւէտ գործը։ Հեշտ ու յարմար ճանապարհների շնորհով մեր գիւղացու չարքաշ ապրուստը զգալի կերպով կը թեթևանայ անշուշտ։

Ստ. Տէր-Աւետիքեանց

## ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՑԻՑ

Օգոստոսի 30-ին

Ամարային սեզոնը արդէն վերջացաւ և ամենքը հետևապէս ցրվեցին իրանց տները։ Միթէ այսուհետև էլ ձեռքերը ծալած պէտք է սպասել եկող ամառվան։ Ժամանակ է վերջապէս, որ լուրջ կերպով մտածվի յարմարութիւններ ստեղծելու ամարանոց եկողների համար։ Համարեա ամեն տարի նրանք անբաւական են գնում, գանգատվելով թանգութեան և ժամանակը տխուր անցկացնելու վրա։ Պէտք է չը մոռանալ, որ ամարանոց եկողը մաքուր և զով օդի հետ կարիք է զգում և զուարճութիւնների։ Ի՞նչ է արված մինչև օրս եկողների գէթ այդ վերջին պահանջին բաւականութիւն տալու համար. կրկին ոչինչ։ Շատ չէր լինի բոլորովին, եթէ հէնց այժմեանից պ. Աղասեանի տանից դէպի վեր գտնվող ազատ տարածութիւնը ցանկապատվէր, շինվէին ալէյներ և հոգ տարվէր ծառեր տնկելու և ռոտոնդ շինվելու մասին, այնպէս որ եկող սեզոնին պատրաստ լինէին։ Ռոտոնդը մեզ հնարաւորութիւն կը տայ յաճախակի պարահանդէսներ և ներկայացումներ տալ, որոնք բացի կրթական նշանակութիւնից, ահագին բաւականութիւն կը պատճառեն ամարանոց եկողներին։

Յարմարութիւնների թւում պէտք է յիշել և գրադարան-ընթերցարանի շուտափոյթ բացման խնդիրը, փողոցների կանոնաւորման, մաքրութեան և լուսաւորութեան հարցը, որի վրա, պէտք է խոստովանած, այժմեան տանուտէրը առանձին ուշադրութիւն է դարձնում։ Շատ լաւ կը լինէր, եթէ գոնէ մեծ փողոցի երկու կողմերով ծառեր տնկվէին։ Առանձին պակասութիւն է զգացվում և աղբիւրների, որոնք կենսական նշանակութիւն ունեն։ Կարծում ենք, այնքան էլ դժուար չէր լինի մեր տանուտէրի համար, եթէ նա ձեռնարկէր գիւղը բերել տալու «Խրխնջան» կոչված աղբիւրը, որ գտնվում է գիւղից երկու վերստ հեռաւորութեան վրա և յայտնի է որպէս պատուական ջուր։ Յոյս ունենք, որ եթէ այս ձեռնարկութիւնը սկսվի, տեղացի հարուստներից նուիրաբերութիւններ տնողներ էլ լինեն։ Առհասարակ պէտք է աշխատել ամեն կերպ գրաւել ամարանոց եկողներին։ Այն օրից, երբ երկաթուղին սուլելով անցաւ Փամբակի ձորով, մեծ-ղարաքլիսեցու, ինչպէս նաև շրջակայ գիւղացիների ապրուստը դարձաւ աւելի դժուարին, որովհետև փակվեցին ապրուստի շատ աղբիւրներ, որոնցով առաջ գիւղացիք հայթայթում էին իրանց օրական պարէնը։ Այժմ մնում է, որ ղարաքլիսեցին ուժ տայ գիւղատնտեսութեան և ամեն կերպ աշխատէ, առանց կանգ առնելու փոքրիկ զոհողութիւնների առաջ, աւելի ու աւելի շատ գրաւէ դէպի իրան ամարանոց եկողներ։ Միմիայն լուրջ վերաբերմունքը դէպի այդ երկու պայմանները հնարաւորութիւն կը տայ մեր գիւղացուն պահպանել իր տնտեսական հաւասարակշռութիւնը և օր աւուր չը դիմել դէպի դառն աղքատութիւն։ Չը մոռանանք, որ մի ժողովրդի բարգաւաճութեան հիմնաքարը կազմում է նրա տնտեսականը։ Թող ժողովուրդը լուրջ ուշադրութիւն դարձնէ գիւղատնտեսութեան վրա, որի մի քանի ճիւղերը, ինչպէս այգեպանութիւնը, մեղուաբուծութիւնը և անասնապահութիւնը կաթնատնտեսութեան հետ մեր կլիմայական և հողային պայմաններում շատ աջողվում են և ժամանակին կարող են տալ շատ մեծ արդիւնքներ։ Թող ժողովուրդը ձեռք վերցնէ արուեստօրէն առաջացրած թանգութիւնից, որից գանգատվում էին գրեթէ բոլոր ամարանոց եկողները։ Թող պ. տանուտէրը անէ այն, ինչ որ իրանից կախված է և հնարաւոր է, այն ժամանակ կարելի է յուսալ, որ ղարաքլիսեցին կունենայ տնտեսական բաւական գոհ վիճակ և նախանձելի դիրք կը գրաւէ իր շրջակայքի նկատմամբ։

Ի դէպ, վատ չէր լինի, եթէ գիւղից դէպի հարաւ, մինչև անտառը ձգվող ընդարձակ տարածութիւնը բաժանվէր ծխերի վրա և տրվէր իւրաքանչիւրին որոշ հողաբաժին այգիներ գցելու և ամարանոցներ շինելու համար։ Այդ բանը մանաւանդ նպատակայարմար կը լինէր հէնց այն պատճառով, որ գիւղում յարմար բնակարանների թիւը այնքան էլ շատ չէ։ Որքան գիտենք՝ այդ ծրագիրը վաղուց գոյութիւն ունի և միայն ցաւում ենք, որ մինչև այժմ չէ իրագործվել։ Այգիներ տնկելով և ամարանոցներ շինելով, գիւղացիք նոյն հողից կարող են շատ աւելի արդիւնք վերցնել, քան այժմ, մանաւանդ որ մեր հողը հացաբոյսերի աճեցման նկատմամբ այնքան էլ պիտանի չէ։ Խելացի տնտեսութիւնը ձգտում է նոյն հողից վերցնել հնարաւորութեան չափ աւելի արդիւնք,

Վարվենք և մենք այդպէս այս դէպքում։

Ար.

## ՆՈՐԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստր Երմոլով յանձնարարեց հիդրոլոգ Մարտէլին հետազօտել մօտ 30 գետեր, գետակներ և հովիտներ Սև-ծովի ափերում։ Հիդրոլոգ Մարտէլի բոլոր հետազօտութիւնները կը տևեն երկու ամիս։

—

Ստացանք Լազարեան ճեմարանի պրոֆէսոր Գրիգոր Խալաթեանցի «Über die Armenische Version Weltchronik Hippolytus»—(Հիպպոլիտի համաշխարհային պատմութեան հայերէն թարգմանութեան մասին)—խորագրով գերմաներէն փոքրիկ աշխատութիւնը, որ նա իբրև դասախօսութիւն կարդացել է Համբուրգում տեղի ունեցած «Միջազգային արևելագիտական XIII-րդ համաժողովում» և ապա տպել է Վիէննայի «Zeitschrift f. d. Kunde d. Morgenl».-ում։ Յարգելի հեղինակը յիշում է, որ Մովսէս Խորենացու մասին ուսումնասիրութիւն կատարելիս մի քանի տարի առաջ Վենետիկի ձեռագիրների մէջ գտել է Հիպպոլիտի այդ աշխատութեան հայերէն բառացի թարգմանութիւնը։ Դրանից յետոյ նա համառօտակի պատմում է ձեռագրի բովանդակու-

---

շաւախմբի նպատակակէտը։ Արշաւախմբի անդամների մեծամասնութեան նպատակն էլ հէնց միայն այդ է, բացի ինձանից. ես ոչ մի գիտնական նպատակ չունեմ և գնում եմ ողջունելու ծերուկ Մասիսին և երկրպագելու նրան...

Սակայն Մասիսին ողջունելուց առաջ՝ ես կարօտով ողջունում եմ գեղանի Արագածին։ Ահա արդէն բացվում է Շիրակի լայնածաւալ դաշտը և Արագածը կանգնած է իմ առաջ իր երկճիւղ սպիտակ գագաթով, իր լայն արքայական նըստուածքով։ Որպէս ալէքսանդրօպոլցի, ես սիրում եմ նրան. սիրում եմ նրա ծաղկաւէտ ստորոտները, նրա թաւ—կանաչոտ արօտները, ուր այնքան շրջել եմ պատանեկութեան անհոգ օրերում. սիրում եմ նրա անապական, մաքուր, կարկաչուն, սառնորակ աղբիւրները, խաղաղ գիւղերը, ցրված նրա հիւրընկալ լանջերի վրա։ «Թէ քուն մտնելիս և թէ յառնելիս» ես նրան եմ տեսել իմ առաջ. օտարութեան մէջ ամենից առաջ ես նրա կարօտն եմ քաշել։ Անսահման սիրով այժմ էլ իմ հայեացքս ուղղված է նրան և նրա ստորոտում սփռված անծայրածիր դաշտերին։ Ողջոյն ձեզ, հայրենի լեռներ, ողջոյն ձեզ դաշտեր հայրենի... Թէև հեռու ձեզանից, բայց ձեր սիրուն ու սիրելի պատկերը միշտ անաղարտ պահվել է հոգուս խորքերում... Ձեր ծոցում սնված ու մեծացած հայը ձեզ երբէք չի մոռանայ։

V

Գնացքը կանգ առաւ Ալէքսանդրօպոլ կայարանի առաջ։ Երկաթուղին ամեն տեղ դրոշմել է իր կնիքը, յայտնել է իր պահանջները, որոնել ու գտել է իր յարմարութիւնները՝ առանց շատ անգամ նայելու ազգաբնակութեան պահանջներին ու յարմարութիւններին։ Չէ որ այդ գիծը մի ռազմական ճանապարհ է իր առանձին շահերով՝ տարբեր խաղաղ ժամանակի հասարակական շահերից։

Հեռու քաղաքից՝ շոգեմեքենան կանգնած է հպարտ իր համար գրահապատ կրծքով և առանց ուշք դարձնելու ոչ ոքի ու ոչնչի վրա՝ որպէս մի արևելեան փաշայ, ծխում է ու ծխում իր հսկայական նարգիլէն. և խղճուկ քաղաքն ստիպված է ինքը չոքէչոք առաջ գալ, մօտենալ, ձեռքը ճակատին դնել ու շնորհակալութիւն յայտնել նրան, որ դեռ աւելի հեռու չէ կանգնած, ինչպէս Երևանում։ Եւ պէտք է ասել, որ Ալէքսանդրօպոլն իր ծնկաչոք շարժման մէջ դէպի երկաթուղու կայարանը բաւական առաջադիմութիւն է գործել վերջին երեք-չորս տարիների ընթացքում։ Ո՜րքան նոր տներ, խանութներ, փողոցներ... քիչ է մնում, որ ես չը ճանաչեմ իմ հայրենի դանդաղաշարժ, քնասէր, փոշոտ Ալէքսանդրօպոլը։

Գնացքը կանգ է առնում այստեղ ընդամենը 40 րոպէ. ես հաշւում եմ, որ անկարող կը լինեմ գնալ քաղաք ու վերադառնալով կրկին միանալ ընկերներիս, ուստի հեռուից մի կարօտալից հայեացք եմ գցում Փրկչի եկեղեցու բարձր, հոյակապ գմբէթին ու վճռում եմ մընալ կայարանում։ Ես որոնում եմ կայարանի խուռն բազմութեան մէջ ծանօթ դէմքեր բայց աւա՜ղ, այս տասներեք տարվայ մէջ, երբ ես հեռու եմ եղել իմ հայրենի Ալէքսանդրօպոլից, շատ ջուր է հոսել ու անցել Ախուրեանի ափերի մէջ. աճել ու զարգացել է նոր սերունդ, կազմվել է նոր երիտասարդութիւն, բազմացել են նոր քաղաքացիներ։ Նայում եմ մէկ մէկ ամենքին և թւում է ինձ, թէ ես տեսնում եմ շատ ծանօթ դէմքեր, մի և նոյն ժամանակ չեմ ճանաչում ոչ ոքի։ Վաղեմի տաճկահայ գաղթականը, ուղիղ է, շատ քիչ է ենթարկվել մարմնական էվօլիւցիայի ազդեցութեան. ես տեսնում եմ իմ առաջ նոյն խոշոր, ըստ մեծի մասին, անկանոն, թուխ դիմագծերը, նոյն սևորակ, միամիտ, փոքր ինչ ոչխարահայեաց աչքերը, շատ դէպքերում նոյն տիտանեան քիթը, հաստ, հիմնաւոր շրթունքները, նոյն ալածայր, աջ ու ձախ կողմից տափակացրած գլուխը, նոյն կոկորդային, կոշտ արտասանութիւնը, նոյն ազատ, անկիրթ, հայհոյանքներով համեմած խօսակցութիւնը,—բոլորը, բոլորը վաղուց ծանօթ ու սովորական բաներ,—բայց և այնպէս չեմ ճանաչում ոչ ոքի։ Մի չնչին տարբերութիւն միայն նախկինի և այժմեանի մէջ խփում է իմ աչքին. չուխաները, կարճեր, շատ քիչ են, և շատ շատ են սիւրտուկներն ու պիջակները. կանանց ոսկեշարան գլխանոցները փոխվել են շլեապայի, մաշքարուշը տեղի է տուել կօշիկներին։ Եւրոպականացման այդ արտաքին ձևերը շատ քիչ մըխիթարութիւն են պատճառում ինձ։

Ետևիցս յանկարծ մէկը բռնում է թևս։ Շատ եմ գալիս և տեսնում իմ նախկին պաշտօնակից—ուսուցչին։ Փա՜ռք Աստուծոյ. գոնէ մի հատ ծանօթ գտնվեց։ Թև թևի տուած մենք զբօսնում ենք կայարանի առաջ, չը նայելով բարկ արևի ճառագայթներին, և աշխոյժ-աշխոյժ խօսակցում իրար հետ։ Նա պատմում է ինձ մի շարք նորութիւններ, թւում է հասարակութեան արած առաջադիմութեան արտայայտութիւնները։ Երեխայի նման ուրախանում եմ ես, սիրտս հրճվում է, հոգիս փառաւորվում։ Հա՜, ուրեմն արտաքին խաչուօրկ անշարժութեան դիմակի տակ վառվել է օրքաղան հուրը, հասարակական բարիքի նախանձախնդրութեան առաքինի զգացմունքը, միամիտ, սառած աչքերը բոց են ցայտում, ձեռքը միայն փուռչուլաւկ ու երալմասի չը ծախում, այլ սովորել է բարձրանալ նաև հասարակական ցեցերի ու ուսիճի դէմ. ուրեմն կատարվել է զգացմունքի և մտածողութեան եղանակի մի ներքին փոփոխութիւն, որ հազար անգամ աւելի գնահատելի է արտաքին փոփոխութիւնից...

Երբ գնացքը մեկնում է կայարանից, յուզված սրտով նայում եմ ես վագօնի պատուհանից քաղաքի ցածրիկ տներին, հողածածկ կտուրներին, եկեղեցիների այս ու այն կողմում ցցված բարձր գմբէթներին, և իմ շըրթունքները ինքնաբերաբար մրմնջում են.

—Թող Աստուած զօրավիգ լինի ձեզ, անգին հայրենակիցներ...

(Կը շարունակուի)

թիւնը և գալիս է այն եզրակացութեան, որ դա հայերէն թարգմանված է VII-րդ դարում՝ Անանիա Շիրակացու ձեռքով։

—

«Рус. Вѣд.» լրագիրը հաղորդում է, թէ բաւական հետաքրքրական հետևանք է ստացվել յունարէն լեզուն սովորելու վերաբերմամբ մինիստրական շրջաբերականը աշակերտներին յայտնելուց։ Շրջաբերականը իրաւունք է տալիս ազատօրէն ընտրութիւն անելու յունարէն լեզուի ուսումնասիրութեան և մի քանի այլ առարկաների մէջ։ Այսպէս, օրինակ, յունարէն լեզուն ուսումնասիրել չը ցանկացողը կարող է պարապել կամ մաթեմատիկայի գործնական վարժութիւններով կամ Հոմերոսի «Ոդիսականն» ու «Իլիականը» ռուսերէն կարդալով և կամ ուսումնասիրելով Ռուսաստանի աշխարհագրութիւնը։ Պետերբուրգի գիմնազիաներից մէկում այն հարցին, թէ ով է ուզում սովորել յունարէն լեզուն, 50 աշակերտներից բաղկացած դասարանում ոչ ոք չը շարժվեց տեղից։

—

**ԲԱԳՈՒԻՑ** մեզ գրում են. «Մի նոր և ցաւալի փաստ էլ աւելացաւ Բագուի անվերջ մարդասպանութիւնների թւի վրա։ Այսօր քաղաքային հիւանդանոցում վախճանվեց մի հայ երիտասարդ, 22 տարեկան հասակում։ Այդ բանւորը օգոստոսի 28-ին, երեկոյեան ժամը 9-ին, գործից վերադառնալիս անցնում է դէպի ծովափ, Պետրովսկայա կոչվող հրապարակը, ուր մութի մէջ նրա վրա է յարձակվում մի չարագործ և դաշոյնի հինգ հարուած է հասցնում խեղճին. Նրա օգնութիւն կանչող աղաղակին ոչ ոք չէ հասնում մօտակայ խանութպաններից։ Ծանր վիրաւորված բանւորին հիւանդանոց են տանում, ուր երկու օրից յետոյ մեռնում է։ Բանւորի անունը Աւագ Միկիտեանց է։ Նա ունի մի պառաւ մայր գիւղում, որին միակ որդու մահը գուցէ կսկիծից գերեզման կը տանէ։ Մարդասպանը բանտարկված է։»

—

**ԽԱՆԼՈՒԽԼԱՐԻՑ** (Շարուրի գաւառ) մեզ գրում են. «Օգոստոսի 25-ին, երկուշաբթի, ճաշից յետոյ ժամը 5-ին զգացվեց երկրի սաստիկ ցնցում. դպրոցի պատերը զգալի կերպով շարժվեցին, պատին կպած հայելին, սանդուղքը շարժվեցին մօտ 5 վայրկեան. ստորերկրեայ ցնցման ուղղութիւնը արևմուտքից դէպի արևելք էր. լսվում էր աղմուկ, ինչպէս կամուրջով կառք անցնելիս։»

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

—

**Կոտորած մայրաքաղաքում.** Թիւրքական մոլեռանդութիւնը կամաց-կամաց զօրեղանում է և դժբախտ արդիւնքներ տալիս։ Քրիստոնեաների կոտորածը միայն Մակեդոնիայում չէ իր զոհերը տանում, այլ և ուրիշ տեղերում, հեռաւոր վայրերում։ Կոտորած Բէյրութում, կոտորած Ռոդոստոյում, կոտորած Թիւրքաց Հայաստանում. ահա և վերջապէս կոտորած Բոսֆորի ափին՝ Կ. Պոլսում։

Թիւրքիան կոտորել է դարերի ընթացքում, կոտորում է և այժմ. կոտորում է ոչ միայն գաւառներում, այլ և իր մայրաքաղաքում, Սուլթան Համիդի աչքի առաջ։ Իսկ Եւրոպան ինչ է անում. նա միայն թղթեր է գրում, առաջարկութիւններ է անում։

Այդ դառն ճշմարտութիւնից յետոյ «Нов. Вр.»-ն գալիս է խոստովանելու, որ այժմ անհրաժեշտ է ակտիվ միջամտութիւն Եւրոպայի կողմից։

—Բ. Դուռը, ասում է ռուս թերթը, իրականապէս խոստովանում է իր անզօրութիւնը, անկարող լինելով կարգը պահպանել նոյն իսկ իր մայրաքաղաքում։ Այդպիսի պայմաններում մնում է, որ Եւրոպան ակտիվ միջամտութեամբ երաշխաւորէ Թիւրքահպատակ քրիստոնեաների կեանքն ու գոյքը»...

Առաջին անգամը չէ, ի հարկէ, որ այդպիսի կարծիքներ են արտայայտվում մամուլի էջերում, բայց դժբաղդաբար դրանք բոլորն էլ մնում են միայն դատարկ հնչիւններ, իսկ դառն իրականութիւնը առաջ է ընթանում արեան գետերի միջից։

—

**Կ. Պոլսի ազգաբնակութիւնը.** Վերևում առաջ բերած տեղեկութիւններից երևում է, որ կոտորածի ծայրը Կ. Պոլիս էլ է հասել, ուստի աւելորդ չի լինի իմանալ, թէ ինչ կազմ ունի այդ քաղաքի ազգաբնակութիւնը։ Նորագոյն վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ Կ. Պոլիսը ունի մօտ 1,110,000 բնակիչ, որի կէսը քրիստոնեաներ են, իսկ միւս կէսը մահմեդականներ։ Դեռ 1885 թւին քրիստոնեաներից 153,000-ը յոյներ էին, 149,000-ը հայեր, 44,000-ը բուլղարներ և մօտ 130,000-ը օտարահպատակներ։ Այդ թուականից յետոյ, ի հարկէ, որոշ փոփոխութիւններ տեղի են ունեցել, հայերի թիւը անշուշտ պակասել է կոտորածների պատճառով, բայց ընդհանուր առմամբ մահմեդականների ու քրիստոնեաների համեմատական քանակը գրեթէ նոյնն է մնացել։

Բայց ինչպէս երևում է, մահմեդական ամբոխը արդէն այնքան գրգռված է, որ այլ ևս ոչ մի ուշադրութիւն չէ դարձնում ոչ քանակի, ոչ դեսպանների ներկայութեան և ոչ էլ իր «փադիշահի» արտաքին բարեացակամութեան վրա։ Նա արեան ծարաւ է զգում և այդ ծարաւը յագեցնելու համար առանց այլ և այլութեան կոտորում է «գեաւուրներին», լինեն նրանք մակեդոնացիներ, հայեր կամ օտարահպատակներ.—այդ մի և նոյնն է։

—

**Չեռնոգորիան սպառնում է.**—Ինչպէս երևում է, Մակեդոնիայում կատարվող անվերջ սարսափները լցրել են չեռնոգորցիների համբերութեան բաժակը։ Գերմանական կիսապաշտօնական «Post» լրագրում տպագրված է մի սենսացիոն հեռագիր Ցետինիէից։

—Չեռնոգորիայի իշխանը, ասում է այդ հեռագիրը, Մակեդոնիայի և Հին-Սերբիայի դրութեան վերաբերեալ հարցը քննելիս ասաց, որ եթէ Թիւրքիան չը կարողանայ շուտով զսպել իր զինուորներին ու ալբանացիներին, որպէս զի նրանք բռնութիւններ չը կատարեն քրիստոնեաների վերաբերմամբ, այն ժամանակ Սերբիան և Չեռնոգորիան կը կատարեն իրանց սրբազան պարտքը և օգնութեան կը հասնեն իրանց հաւատակից թշուառ եղբայրներին»։

—

**Մակեդոնացու կոչը.**—Արիւնաքամ եղած, անվերջ հալածանքների ենթարկված մակեդոնացիների կողմից Լազարեվիչ ազգանունով մի մակեդոնացի «Автономія» թերթում զետեղել է մի կոչ՝ բոլոր քրիստոնեաներին ուղղված։ Նա առաջարկում է հանգանակութիւն բաց անել մակեդոնացիների համար և հաւաքել 50 միլիոն ֆրանկ։

—Այդ գումարով, ասում է նա, կարելի է կազմակերպել 50,000 հոգուց բաղկացած մի զօրաբանակ, որին անդամներ կը դառնան զանազան ազգութեան պատկանող քրիստոնեաներ։ Այդպիսի զօրաբանակի շնորհիւ կարելի էր Մակեդոնիայում կարգ հաստատել և թշուառ ազգաբնակութեան հեկեկանքը դադարեցնել։ Այդ զօրքերը պէտք է մնան Մակեդոնիայում, որքան որ անհրաժեշտ համարվի մեծ պետութիւնների կողմից. իսկ դրանից յետոյ նրանք կարող էին միջազգային ոստիկանութեան ֆունկցիաներ կատարել»...

Բայց ով է լսելու այդ կոչը, ով է իրականացնելու։

—

**Մեծ պետութիւնների համաժողովի** անհրաժեշտութիւնը օրէցօր աւելի ու աւելի կողմնակիցներ է գտնում քաղաքական շրջաններից։ Այդ մասին «Information» լրագրի Հռոմի թղթակիցը հետևեալն է գրում.

—«Եւրոպական համաժողովը անխուսափելի է համարվում, որովհետև Թիւրքիան արդէն ցոյց տուեց, որ անզօր է ապստամբութիւնը ճնշելու համար։ Իտալիայի քաղաքական գործիչները անհնարին են համարում մակեդոնական հարցի լուծումը յետաձգել մինչև հետևեալ տարի... Բալկանեան թերակղզու բոլոր պետութիւնների համար չափազանց ծանր է այժմեան դրութիւնը շարունակել։ Իտալացի քաղաքագէտները կարծում են, որ համաժողովի նախագահողը Անգլիան պէտք է լինի։ Եթէ պետութիւնները համաձայնութիւն տան, այն ժամանակ համաժողովը կը կայանայ այս տարի Բեռլինում կամ Լոնդոնում...

Ի հարկէ, իր կողմից աւելացնում է «Information»-ը. այդ համաժողովում պէտք է քննվեն ոչ միայն մակեդոնական, այլ և ալբանական ու հայկական հարցերը։

—

**Հայ դրագոմանը ձերբակալված։** Գերմանական լրագիրների ասելով, մօտ օրերս Կ. Պոլսի ամենաբանուկ փողոցներից մէկում, օրը ցերեկով ձերբակալված է Հաջիբեան ազգանունով մի հայ, որը դրագոմանի պաշտօն էր վարում ռուսաց դեսպանատանը։ Այդ դէպքի պատճառը դեռ յայտնի չէ, բայց Հաջիբեանին պահում են ամենախիստ հսկողութեան տակ։ Նոյն իսկ հարազատ որդուն չը թողին նրա հետ տեսնվելու։

Անշուշտ կը միջամտէ ռուսաց դեսպանը և հարցը շուտափոյթ լուծում կը ստանայ, պարզելով ճշմարտութիւնը։

Բայց ինչ է լինելու այն բազմաթիւ ձերբակալվածների վիճակը, որոնց համար ոչ միջամտող կայ, ոչ պաշտպանող։ Ինչ է լինելու ընդհանրապէս բոլոր Թիւրքահպատակ քրիստոնեաների ապագան...

### ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, օգոստոսի 1-ին

Ուսումնարանների բացվելու ժամանակը մօտենում է, բայց Սալմաստի հայ բնակչութիւնը, ընդհանրապէս վերցրած, դեռ խոր քնի մէջ է այդ հարցի վերաբերմամբ։

Պարսկաստանում բարձր կարգի կրթական հիմնարկութիւններ չը կան,—մանկական պարտէզներ, պանսիօններ, կանոնաւոր թատրոններ, ժողովարաններ և այլն դեռ երազներ են Պարսկաստանի համար. Մնում են միայն այս ու այն կողմը ցրված հատ ու կտոր դպրոցները, որոնց վրա լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնել գոնէ մասամբ կանոնաւոր հիմքերի վրա դնելու։

Այդ մասին առաւելապէս պէտք է մտածեն տեղացիները։ Բայց, դժբաղդաբար, տեղացի հայերը կրթութեան այնպիսի ստոր աստիճանի վրա են գտնվում, որ ոչ միայն չեն զգում դպրոցի կարևորութիւնը, այլ և նրա գոյութիւնը մի աւելորդ բեռ են համարում իրանց տնտեսական հաշիւների տեսակէտից։ Շատ գիւղեր կան, որոնք բացարձակապէս մերժում են դպրոց ունենալ, կան գիւղեր էլ, որոնք տարեմէջ են դպրոց ունենում։ Ամբողջ Սալմաստի մէջ միայն Ղալասարն է, որ ունի կանոնաւոր դպրոց, թատերասրահ և գրադարան, այն էլ շնորհիւ պ. Ս. Թ—եանի, որ 5—6 տարի է շարունակ եռանդուն կերպով աշխատել է և երկար չարչարանքներից յետոյ այդպիսի բարեկարգ հետևանքին է հասել։

Դպրոցների չը բացվելուն պակաս չեն նպաստել—և ներկայումս էլ նպաստում են—նաև ուսուցիչները, ի հարկէ, աննչան բացառութեամբ։

Դպրոցական գործի կաղկաղ ընթացքի մի այլ պատճառն էլ ուսուցիչների շուտ շուտ տեղափոխվելն է. մի ուսուցիչ սկսում է իր պաշտօնավարելի դպրոցում պարապել իր սիստեմի համեմատ, նա իր աշակերտների մէջ մի ոգի է սկսում մտցնել, իսկ երկրորդ տարին կամ ժողովուրդը նրան չէ պահում, կամ ինքն է հեռանում և նրա տեղ գալիս է մի ուսուցիչ, որ սկսում է իր նախորդի շինածը քանդել և նորից սկսել։ Ահա այս տեսակ անկանոնութիւնները ուսումնարանական գործը այն աստիճանին են հասցրել, որ ժողովուրդը ոչ մի բարեբեր հետևանք չը տեսնելով, ուսումնարանը բեռ է համարում, աւելորդ ծախս, փողի թալան և ուրիշ ոչինչ։

Ով կարող է այս բոլորը կանոնաւորել, ով պէտք է մտածէ այս անկանոնութիւններին վերջ տալու և ժողովրդին սերտ կերպով կապելու դպրոցի հետ։—Ատրպատականի առաջնորդարանը, իսկ որովհետև թեմական առաջնորդը անմիջապէս չէ կարող հսկել այդ բոլորի վրա, ուստի ցանկալի է, որ մտածէ մի թեմական տեսուչ կամ տեսչի պաշտօնակատար նշանակել, որոշ իրաւունքներով, որ այդ բոլոր անկանոնութիւնները կարգի բերէ։

Յուսով ենք, որ Եղիշէ ծ. վ. Մուրադեան գործնական միջոցի կը դիմէ դպրոցները բարեկարգելու և չի թողնի, որ կրթական գործը իր թեմում կրիայի քայլերով ընթանայ։

Ս. Աստուածածնի տօնի առթիվ, Հաֆթուանի ուսուցիչ պ. Պետրոսեանի նախաձեռնութեամբ, դպրոցի թատերասրահում տեղի ունեցաւ գրական երեկոյթ, որ գրաւել էր մի այնպիսի խուռն բազմութիւն, որ ոչ մի հանդէսի ժամանակ չէր եղել։ Ամսիս 17-ին էլ նոյն տօնի առթիվ ներկայացվեցին «Բանաստեղծ» և «Նիսիա» կատակերգութիւնները։ Դերակատարները բաւարար էին։

ՈՒ.

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«С. Петерб. Вѣд.» լրագրի Բելգրադի թղթակիցը ի միջի այլոց գրում է. «Արտասահմանեան մամուլի մէջ չեն դադարում ցեխ գցել Սերբիայի և նրա թագաւորի վրա։ Թղթակցին հաւատացնում էր մի բարձրաստիճան անձն, որ այդ զզուելի արարքի աղբիւրը ինքն Բելգրադն է։ Օրինակ, «Պետր թագաւորը և զօրքը» վերնագրով սուտերով լի յօդուածը, որ տպված էր անգլիական «Times» լրագրում, գրել է սերբիական արտաքին գործերի մինիստրութեան մամուլի բիւրոյի գլխաւորը։ Բելգրադում, թղթակցի խօսակցի խօսքով, դեռ շատ անձինք կան, որոնք փողի համար ծառայում են ում ուզում էք։ Դրանց դէմ դեռ ստիպված կը լինենք կռուել, հէնց որ սկուպշչինան կը գումարվի։ Աշխարհս դեռ ես չը գիտէ, թէ որպիսի դժոխային մեքենայութիւնների դէմ մենք կռիւ էինք մղում, որի մէջ ընկաւ սերբիական թագաւորը։ Մայիսի 29-ից յետոյ միայն մենք իմացանք, որ հանգուցեալ Ալէքսանդր թագաւորի բարեկամները, նրա մտերիմ օֆիցերները մի քանի անգամ աւելի փող էին ստանում մի պետութիւնից, քան սերբիական գանձարանից և ասելն արդէն աւելորդ է, որ նոյն պետութիւնը ունէր և մինչև այժմ էլ ունի Բելգրադում մամուլի իր օրգանները, իր ճարպիկ գործակալները, որոնք իբրև որդեր ուտում են սերբիական պետական կեանքը։ Պետր թագաւորը չէ ենթարկվում օտար մեքենայութիւններին։ Այստեղ Օբրէնովիչի բարեկամները աշխատում էին վախեցնել նրան, առաջարկում էին նրան իրանց ծառայութիւնները, իրանց աւանդական հաւատարմութիւնը՝ սերբիական գանձարանը շահագործելու համար, ինչպէս այդ առաջ արվում էր, բայց բոլորը իզուր էր»։

—Կ. Պոլսից հաղորդում են, որ Իլդիզ-Քիոսկի ներսում զգուշութեան արտակարգ միջոցներ են ձեռք առնվում։ Երկու գեներալ, չորս գնդապետ, ութը կապիտան և 100 զինուորներ,—բոլորն էլ ընտրովի և յուսալի մարդիկ,—հերթապահութիւն են անում օր ու գիշեր, սուլթանին պաշտպանելու համար։ Գեներալը ստանում է գիշերային հերթապահութեան համար 25 ոսկի, մնացած պաշտօնեաները ստանում են փող իրանց աստիճանի համեմատ, զինուորները կէս-կէս ոսկի։ Հերթապահութիւնը շարունակվում է հինգ օր ու գիշեր։

—Կրուշևոի աւերի ընկնող բնակիչները, յոյները և կուցովլախները Բիտոլիում պետութիւնների ներկայացուցիչներին յանձնեցին մի յիշատակագիր, որի գլխաւոր միտքն այն է, որ Բ. Դուռը ցանկանում է ապստամբների վրա գցել թիւրքաց զօրքերի ձեռքով կատարած բոլոր գազանութիւնների մեղքը, և որ այժմ Բիտոլիայից եկած թիւրքաց գնդապետը հարկադրում է Կրուշևոի կենդանի մնացած բնակիչներին ստորագրել մի յայտարարութիւն, որի մէջ ասված է, թէ բոլոր աւերմունքները և բոլոր յանցանքները կատարել են հրոսակախմբերը և ոչ թէ թիւրքաց զինուորները։ Յիշատակագիրը հաղորդում է, որ ըսպանվածների թիւը մօտ 80 է, բայց բռնաբարված կանանց և աղջիկների թիւը շատ մեծ է։ Այրված կամ քարուքանդ արված տների թիւն է 340-ից մինչև 400։ Վնասները 500,000 ոսկուց աւելի են։ Կողոպտված են յունական ս. Նիկօլայի հոչակաւոր եկեղեցին, յունական միտրոպոլիտի տունը և հիւանդանոցը, իսկ շրջականերում՝ Համբարձման վանքը և ս. Վասիլիի եկեղեցին։ Եկեղեցական իրերը չնչին գնով ծախվում են մերձակայ քաղաքների շուկաներում։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

1 սեպտեմբերի

**ԲՈՒԴԱՊԵՇՏ։** Սօցիալիստական միտինգը, որին մասնակցում էին մօտ 35,000 մարդիկ, ընդունեց որոշում, որով պատերազմ է յայտարարվում անկախութեան կուսակցութեան, որովհետև վերջինս մերժեց միասին գործելու առաջարկութիւնը ընդհանուր ընտրողական իրաւունք ձեռք բերելու համար։

**ՕՐԷՕԼ։** Նահանգական ազնուականութեան պարագլուխ Ստախովիչ բաղդաւորվեց Մեծ Իշխան Թագաժառանգի հետևեալ հեռագրով. «Հեռանալով Օրէօլից ամենախորժելի տպաւորութեան տակ, խնդրում եմ յայտնել բոլոր ներկայ եղող ազնուականներին, նոյնպէս և ցուցահանդէսի մասնաժողովին իմ սրտագին երախտագիտութիւնը այդքան անկեղծ և սիրալիր ընդունելութեան և բարեխիղճ աղ ու հացի համար։ «Ստորագրված է. «Միխայիլ»։

**ՍԱԿԻ։** Ցեխաբուժարանը փակված է։ Սեզոնի ընթացքում 1830 հիւանդներ կային։

2 սեպտեմբերի

**ՄՕՍԿՎԱ։** Պօդօլսկի մօտ բացված է Շչապօվի անուան գիւղատնտեսական դպրոց, որը դպրոցին կտակեց 6262 դէսիատին հող և 100,000 ռուբլի։

**ՊԵԱՏԻԳՕՐՍԿ։** Հանդիսաւոր կերպով, ներկայութեամբ պրինց Ալէքսանդր Պետրովիչ Օլդէնբուրգսկու, երկրագործութեան մինիստրի և կովկասեան հանքային ջրերի դիրեկտորի բացվեց կլիմայագիտական, բալնէօլոգիայի և ջրաբանութեան գործիչների երկրորդ համաժողովը։ Համաժողովը դիպակցում է կովկասեան հանքային ջրերի հարիւրամեակին։ Ժամասացութիւնը կատարեց միտրոպօլիտ Անտօնին։ Ժողովը բացած յայտարարելով, Երմոլօվ մի փառաւոր ճառ արտասանեց. մատնացոյց անելով կովկասեան հանքային ջրերի աճումը, նա ողջունեց կուրօրտների բարւոքման համար արված աշխատանքները։ Պատուաւոր նախագահ ընտրված է Երմօլով. Նախագահ—լէյբ-վիրաբոյժ Պավլով. Բազմաթիւ բժիշկներ են եկել. Նրանց թիւը 800 է։ Համաժողովի բացման օրը սկըսված է էլէկտրական տրամվայի երթևեկութիւնը։

**Կ. ՊՈԼԻՍ։** «Dette Publique»-ի վարչական խորհուրդը լիազօրութիւն տուեց նախագահին ստորագրել Թիւրքաց կառավարութեան ներկայացուցչի հետ միասին պարտքի միացման վերաբերեալ արձանագրութիւնը։

**ՎԻԷՆՆԱ։** Հեղեղումների պատճառով երկաթուղիական երթևեկութիւնը Զալցբուրգում, Տիրոլում և Կարինտիայում ընդհատված է։

**ՑԷՖ։** Գլխաւոր ինստրուկտոր սըր Գարրի Մակլին օգոստոսի 29-ին հեռացաւ Մարօկկօից։ Նրա յանկարծակի հեռանալը լրագիրները վերագրում են օտար և մանաւանդ անգլիական ազդեցութիւնից ազատուելուն։ Պալատական բժիշկ անգլիացին ճանապարհ ընկաւ մի քանի շաբաթ առաջ։

**ՏԻԼԶԻՏ։** Տաուրօգէնում տեղի ունեցաւ մեծ հրդեհ։ Այրվեցին երկաթուղիական և տնտեսական շատ շինութիւններ։ Ոչնչացրված են երկու մեծ ֆիրմաների ցորենը և շտեմարանները։

**ՕՐԵՕԼ։** Օգոստոսի 31-ին Օրլովի արխիվային յանձնաժողովի նիստում զեկուցվեց, որ Մեծ Իշխան Թագաժառանգը համաձայն է ընդունել յանձնաժողովը իր Օգոստափառ հովանաւորութեան տակ։

**ՓԱՐԻԶ։** Այստեղ սպասվում է Վիտտէի գալուստը, որը մի քանի օր կը մնայ և կուղևորվի Լոնդոն։

**Կ. ՊՈԼԻՍ։** Ադրիանոպոլի երկրորդ զինուորական շրջանում գտնվում են 65,000 հետևակ զօրք, 3,000 հեծելազօրք և 342 թնդանօթներ. Սալօնիկի երրորդ զինուորական շրջանում գտնվում են 187.000 հետևեակ, 6700 հեծելազօրք և 786 թնդանօթներ. երկրորդ շրջանի տրամադրութեան տակ կայ զէնքի կանչված բէդիֆների երկու բրիգադաների պահեստի զօրք, որոնք դեռ ևս զէնքի չեն կանչված և 8 փոքր-ասիական բատալիօններ, որոնք ապառազինված են, բայց դեռ ևս իրանց տեղումն են մնում։ Այդպիսով ապստամբութեամբ բռնած շրջանում Բ. Դուռն ունի չափազանց բազմաթիւ պատերազմական ույժեր, որոնք փոքր ի շատէ լաւ հրամանատարներ ունեցած ժամանակ, կատարելապէս բաւական են ապստամբական մեծ շարժում ճնշելու համար։—Զէրնոգօրիական արտաքին գործերի մինիստրը ժամանեց Կ. Պոլիս չէրնոգօրիական գործերի հաւատարմատար Մատանովիչի հետ միասին։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

գրախանութում վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները՝

«Տնային բժշկարան», 104 պատկերներով, կազմեց Ա. Թարխանով—1 ր.

«Աղքատին պատիւը», Ալթունեանի, 4 պատկերից—2 ր. 40 կ.

«Պատմական պատկերներ», Եր. Շահազիզի 60 կ։

«Ընտիր Հայկազունք», նոր տպագրութիւն, փոփոխած—2 ր. 50 կ.

«Աղջիկ», բժ. Վ. Արծրունու, պատկերներով—60 կ.

«Զէյթունի անցեալը և ներկայն», մ. ա. գրեց Զէյթունցի (պատկերն.)—1 ր. 50 կ.

«Բառգիրք Արարատեան բարբառի», Տ. Նաւասարդեանի—50 կ.

«Արշալոյս», հայր Ղ. Ալիշանի—1 ր.

«Արևելեան Մամուլ», № 29, նուիրված Մէլքոն արքեպ. Մուրադեանի յիշատակին—20 կ.

Գումարով գնողներին զիջումն կը լինի։

ԱՌԱՆՑ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՈՉ ՈՔԻ ԳԻՐՔ ՉԷ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ։

Դիմել.—Книж. магаз. „Гуттенбедргъ„ д. Лалаева, Дворцовая, Галустяну. 2—3

---

**ՌԱՇՏԻ** ազգային երկսեռ դպրոցների համար ՊԷՏՔ ԵՆ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՄԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ, առաջին տեղը կը տրվի ամուսիններին կամ քոյր և եղբօր։ Պայմանների մասին դիմել «Գուտտենբէրգ» գրավաճառանոցը։ 3—4

---

ՍՈՒԽՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ՄՅԱՐԱ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ Է

### ՍՊԱՍԱՒՈՐ—ԽՄԲԱՊԵՏ

(դպրոցաւարտ)
որը կունենայ և երգեցողութեան դասեր։
Ձեռնտու պայմաններ։

Դիմել՝ Священнику Мкртичу Дирацуянцъ
Гудаутъ (Сухум. окр.)

---

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

### ՍՕՖԻԱ ՋԱՔԱՐԵԱՆ ԽԻՋԱՆԵԱՆ

Վերադառնալով ամարանոցից, ընդունում է հիւանդներին 3—5 ժամը, Վելյամինովսկայա, № 16։ 5—10

---

### ԴՊՐՈՑ
### ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ընդունվում են երկու սեռի մանուկներ պատրաստականի բոլոր բաժանմունքները։ Բացի այդ, պատրաստվում են, հարազատ աղջկայ հետ,—աղջիկները 3-րդ, իսկ տղաները 2-րդ դասարանի համար։ Ուսումը սկսվում է սեպտեմբերի 6-ին։

Բէհբութեան փող., սեփական տուն, № 29։ 6—10

---

### Կ. ԿԷՕՆՃԵԱՆ

Շարունակում է հիւանդների ընդունելութիւնը։ Բժշկում և լցնում է հիւանդ ատամներ, շինում է՝ անդամահատված ծնոտների պրօթեզներ (резекцiонные протезы), արուեստական ատամներ, քիթ և քիմք։

Ընդունում է առաւօտեան 9—2 ժ.
երեկոյեան 5—8 ժ.

Հասցէն՝ Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնովի, Эриванская пл. д. № 2, надъ аптек. магаз. Кавк. Тов.
(չ. ս. կ.) 2—20

---

ԲԺՇԿԱՊԵՏ

### ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերադարձել է հանքային ջրերից և վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։ Գանովսկայա փող., № 20, տ. Թամամշևի (Гановск. ул., д. Тамамшева, № 20).

Առաւօտեան 9—$10^1/_2$ ժամը
Երեկոյեան 5— 7 ժ.

---

ԲԺԻՇԿ

### Ե. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին։

Քիմիկօ-միկրօսկօպիական կաբինէտ։
Ամենայն օր Առաւօտ. 12—2 ժ.
Երեկոները 5—6 ժ.

Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի. № 20. Բախչիևի դեղատան կից. Большая Ванкская ул. домъ Кузанова, № 20, рядомъ съ аптекой Бахчiева. 6—100

---

### Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Յարմարեցրած նորուսների համար
(Բարեփոխված)
ԳԻՆԸ 20 Կ.

### ՈՒՂԵՑՈՅՑ ՏԱՐՐԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարմարեցրած խմբապետների համար
(Վեց դաս)
ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

Դիմել՝ Армавиръ (Куб. обл.) Регенту С. Шаанянцу. 2—5

---

Լոյս տեսան և ծախվում են «ՊՐՈՄԷԹԷՈՍ» գրավաճառանոցում հետևեալ գրքերը.

I) «Աւ. Իսահակեանի բանաստեղծութիւնները»։ Գինն է 1 ր.

II) Եր. Տէր-Յովհաննէսեանի «Մեր ատամները և նրանց պահպանութիւնը»։ Գինն է 25 կ.

III) Գիւ դը-Մօպասանի «Պէլեգկունու խոստովանութիւնը և հանգուցեալի գաղտնիքը»։
Թարգմ. ռուս. Եր. Տէր-Յովհաննիսեանի։

Դիմել՝ Баку, Красноводская улица, домъ Амирова. 2—5

---

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

### ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

№ 8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1) Մրրիկի սուրբը, (չար.) վէպ Ա. Ահարոնեանի. 2) Փողի հերոսը, (Les affaires sont les affaires) կոմեդիա, Օկտաւ Միրբօի, թարգմ. ֆրանսերէնից Ս. Շիշեանի. 3) Վան-Տօսպ, Կարմեցրի. 4) Ամեն. հայ. կաթող. աթոռոյն էջմիածին դառնալը, Պատմաբէրի. 5) Շվէյցարական գիւղը, Ա. Ա. 6) Էն սարի նման... բանաստեղծ. Աւ. Իսահակեանի. 7) Գիմնազիստի օրագրից, Պանդուխտ. 8) Աքսորականի երգը, (Իրլանդ. մեղեդի) փոխադր. Ա. Ծատուրեանի. 9) Մար-Շիմոնը և միսիոնարները, Մէսրոպ-Խան Քարամի. 10) Վրաց կեանքից և գրականութիւնից. —«Երկու գիտնական յղուած հայերի մասին»—Հայ-կաթոլիկների հարցի շուրջ։—Վրացի ուսանողութիւնը։—Մի հրապարակախօսի «առաքելական ուրացումը»։—Մայրենի լեզուի տէրը վրաց մէջ, Տ. Փիրումեանի. 11) Վեց օր ս. Թադէի վանքում (Այցելուի դիտողութիւններից). —Ե. Ֆրանգեանի. 12) Մակարի երազը, (Վլադիմիր Կօրօլենկօ) թարգմ. Ա. Աթայեանի. 13) Ցոյները և Մակեդոնիան, Ա. Ա. 14) Ատրպատականի հայոց կեանքից, Ս. Գ. 15) Նոր ստացուած գրքեր. 16) Գիտութեան աշխարհից, Անտեսանելի ճառագայթները, Մ. Նալբանդեանի։

17) Ներքին տեսութիւն.—Նոր փոխարքայութիւնը։—Նոր կանոններ դժբախտ դէպքերից վնասուած բանուորներին վարձատրելու մասին։—Թիֆլիսի նահանգապետի որոշումը։—«Правит. Вѣст.» Կիևի անկարգութիւնների մասին։—Փոփոխութիւններ ֆինանսների մինիստրութեան մէջ։—Կանոններ արքունական հողերի վրա ապրող գիւղացիների և գաղթականների հողատիրութեան մասին։—Մեռոնի օրհնութիւնը։—Կարգադրութիւններ մամուլի վերաբերեալ։

18) Արտաքին տեսութիւն.—Լորդ Սոլսբերիի մահը։—Անգլիական պահպանողականների բնորոշ կողմերը։—Անգլիական պահպանողականների Թրքասիրութիւնը։—Ցոյների Թրքասիրութիւնը։—Կառավարչական հաղորդագրութիւն. Բիտոլիի ռուսական հիւպատոսի սպանութեան առիթով։—Շահի նուիրած հողը ռուսաց Կայսրուհուն Ուրմիայում. Լ. Ս. 19) Խմբագրութեան կողմից, 20) Վիպակներ, 22) Յայտարարութիւններ. 23) Յաւելուած, Ա. Ռօլլէսի՝ Հրաշալի դար, Թարգմ. Ստ Լիսիցեանի։

---

### ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Тифлисъ, Сололаки, Лермонтовская ул., № 9)

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատտեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական Թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թղթաբանութիւն հաշուիչի վրա. 5) Առևտրական Թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ձրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա։ Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը № 9, Սերգիևսկայա և Լերմոնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. կ.) 23—25

---

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ!!!

### Վ. և Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ,

որը գտնվում է Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, առաջին գիմնազիոնի հանդէպ՝ նշանակված է

### ՄԻՄԻԱՅՆ 15 ՕՐՈՎ
### ՉԸ ՏԵՍՆՎԱԾ ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ։

Ծախու տրված են՝ ձմեռային և ամառային սեզոններից մնացած՝ տղամարդկանց, կանանց և երեխաների բոլոր ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԸ, որոնք անպատմելի կերպով պակասեցրած են իսկականից—30 $^0/_0$-ից մինչև 50 $^0/_0$։

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ!!!

Անպայման առանց սակարկութեան։ 10—15

---

### „ՇՔԵՂ"

Նորին Կայսերական Մեծութեան Թագաժառանգի հովանաւորութեան տակ բացված Պետերբուրգի միջազգային գեղարուեստական ցուցահանդէսում մեր արհեստանոցը արժանացաւ ԲՐՕՆԶԵԱՅ մեդալի։

„ՇՔԵՂ"

Գեղանկար շրջանակներով լոյս տեսաւ մեր Բ. Ալբոմը, այս անգամ հետևեալ տասը նըկարներով. Աբովեան, Նազարեան, Նալբանդեան, Արծրունի, Րաֆֆի, Գամառ-Քաթիպա, Շերենց, Պռօշեան, Լէօ և Ահարոնեան։

Ալբոմը արժէ 1 ր. 50 կ. տալով գնողներին 20 $^0/_0$ զեղչ։ Վաճառվում են նոյնպէս բաց նամակներ հայ գործիչների նկարներով 100-ը 3 րուբլի և հետևեալ 30×40 մեծադիր նկարները։

| | |
|---|---|
| Le Premier pas. | 1 հատը 1 ր. 25 կ. |
| Le Printemps | » 1 ր. 25 կ. |
| Աղամեան (քաղաքացիական շորերով) | » — — 30 կ. |
| » (Պարիզու աղքատներում) | » — — 30 կ. |
| Խրիմեան Հայրիկ. | » — — 30 կ. |

Դիմել՝ Թիֆլիս Ֆօտօտիպիա Գնունի-Մարիմ, Գուչկինեան պասաժ։ Тифлисъ Фототипiя Гнуни-Маримъ. 3—6

---

### ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ

(INJECTION AU MATICO)

Գրիմօ և ընկ. դեղագործների թոյլ է տրված Ռուսաստանում։ Այս հեղուկի մէջ չահագործված են պերուական Մատիկօ բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէյը (սերմնաթափութիւն) և մի քանի տարվայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմնաթափութիւնները։

Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(2, 17) 18—24

Дозволено Цензурою. Тифлисъ, 2 Сентября 1903 г.
Электропечатня Груз. Изд. Т—ва, В. Ванкская ул.